

1980-1990-ական թթ. ավետարանական աստվածաբան Մարտին Տամկեն Գերմանիայում հանդես եկավ մի շարք գիտաքննական հոդվածներով՝ նվիրված հայ ժողովրդի մեծ բարեկամ Արմին Թեոֆիլ Վեգների անձի և Հայոց ցեղասպանության պատմության մեջ նրա ունեցած դերի սկզբունքային վերանայմանը:

Մարբուրգում Ֆիլիպսի անվան համալսարանում ավետարանական աստվածաբանության դոկտորի գիտական աստիճանի արժանացած նրա ատենախոսությունը՝ «Արմին Թ. Վեգները և հայերը – մի ականատեսի հավակնությունը և իրողությունը» թեմայով¹, որը՝ իբրև մենագրություն լույս է տեսել 1993 թ. և լրացումներով վերահրատարակվել 1996 թ. Համբուրգում, նպատակ ունի բացահայտել Արմին Վեգների «կեղծ հայասիրությունը» և ուղղակի սևացնել նրա հայանպաստ, մարդասիրական գործունեությունը Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին: Հիշեցնենք, որ Արմին Վեգները առաջինը և գրեթե միակն էր այն բազմաթիվ ականատեսներից, որ 1915-1916 թթ., ծառայելով Միջագետքում տեղակայված՝ թուրքական VI բանակը գլխավորող գերմանական ռազմական շտաբի սանիտարական բաժնում՝ որպես սանիտար զինվոր և ապա կրտսեր լեյտենանտ, անտարբեր չեղավ երիտթուրքերի կառավարության կանխամտածված ծրագրով Փոքր Ասիայից և Արևմտյան Հայաստանից Միջագետքի կիզիչ անապատներ քշված հայ ժողովրդի համատարած բնաջնջման սահվոր պատկերներին: Եփրատի երկայնքով ձգվող մահվան ճամբարներից Վեգները Գերմանիայում ապրող իր հարազատներին և գերմանացի ճանաչված գրողներին ուղարկած գաղտնի նամակներով ի լուր աշխարհի ազդարարեց Միջագետքում իրագործված սահմոկեցուցիչ ցեղասպանությունը՝ Օսմանյան Թուրքիայի հպատակ, քրիստոնյա անզեն ժողովրդի սպանող:

Թեև Միջագետքում Վեգները ծառայում էր իբրև սանիտար, բայց նա այդ ժամանակ արդեն իրավագիտության դոկտոր էր և բանաստեղծական մի քանի գրքույկների հեղինակ, որի խոսքը և Միջագետքի մահվան ճամբարներում իր իսկ ձեռքով լուսանկարված ցեղասպանության պատկերները հատկապես վտանգավոր էին կայգերական Գերմանիայի թողտվությամբ՝ դաշնակից երիտթուրքերի կառավարության իրագործած հայերի տեղահանությունը և բնաջնջումը դատապարտելու տեսակետից: Ահա թե ինչու այսօրվա Թուրքիայում, Հայոց ցեղասպանությունը ուրանալու հետ մեկտեղ, խիստ կարևոր են համարում դրա ամենավտանգավոր ականատեսի՝ իրա-

¹ **Dr. Martin Tamcke:** *Armin T. Wegner und die Armenier. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen. Habilitationsschrift, eingereicht beim Fachbereich Evangelische Theologie der Philipps-Universität Marburg.*

վագիտության դոկտոր, կրքոտ հրապարակախոս և տաղանդավոր էքսպրեսիոնիստ բանաստեղծ Արմին Վեգների անձի և հայանպաստ գործունեության վարկաբեկումը, որին և ուղղված են ավետարանական աստվածաբանի ոչ աստվածահաճո ջանքերը:

Գյոտինգենի Գեորգ Ավգուստ համալսարանի պրոֆ. Մարտին Տամկեի (պրոֆ.՝ 1999 թվականից, իսկ 2007 թ. առ այսօր՝ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան) հակավեգներյան հրապարակումների մասին անցյալ տարի ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում հոդված է տպագրել Տ. Սարուխանյանը²: «Լրաբեր»-ում տպագրած խիստ վիճահարույց հոդվածում, իր կասկածելի գերմաներենով նա է՛լ ավելի յուղ է լցնում կրակին՝ չքհասկացած արտահայտությունները սխալ թարգմանելով: Օրինակ, նա հետևյալ կերպ է հայերիս փոխանցում պրոֆ. Տամկեի բերած փաստը, թե Վեգները Թուրքիայից Բրեսլաու վերադառնալուց հետո, 1917 թ. մարտի 13-ին հրաժարվում է Դաշտային հրետանու զորակոչիկ ծառայելուց՝ «տրտնջալով ձեռքի ցավից»³: Իրականում, ըստ Տամկեի, 1917 թ. մարտի 13-ին Դաշտային հրետանու զորակոչիկ Վեգները Գերդա Մաուրերին գրած նամակում հայտնում է, թե «իր կույր աղիքի շրջանում (in der Blindarmgegend) ցավեր են առաջացել զորային վարժանքների հետևանքով»⁴: Թե ի՞նչ նմանություն կա «ձեռքի» և «կույր աղիքի» միջև, թողնում ենք թարգմանչի խղճին և ընթերցողի դատաստանին⁵:

Պրոֆ. Տամկեին չի հուզում նաև այն հարցը, թե ինչ պատճառով է սանիտարական ծառայության կրտսեր լեյտենանտը՝ երկարատև հիվանդություններից հյուծված, հանկարծ զորակոչվում որպես դաշտային հրետանավոր – ի՞նչ կապ կա հիվանդախնամի և հրետանավորի միջև: Իհարկե, այստեղ դեր է խաղացել ոչ այնքան պատերազմական ժամանակի անտրամաբանությունը, որքան Գերմանական գաղտնի ծառայության վրեժխնդրությունը, որի ցուցումով էլ Արմին Վեգները արտաքսվեց դաշնակից Թուրքիայից: Այս փաստերից հետևում է, որ Գերմանիայի ռազմական գլխավոր գերատեսչությունը չեղյալ է համարել Միջագետքի գերմանական ռազմական շտաբում Արմին Վեգների կատարած 2 տարվա զինվորական ծառայությունը՝ հենց նկատի առնելով Միջագետքում նրա հայապաշտպան գործունեությունն ու բացահայտումները, որի համար էլ 1917 թ. մարտի 2-ին Վեգները որպես նորակոչիկ է ծառայության կանչվել Դաշտային հրետանու 42-րդ գնդի նորակոչիկների ճամբար: Տամկեն ինքը մեղադրում է Վեգներին Միջագետքում սանիտարական ծա-

² ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, N 2-3, էջ 33-47:

³ Նույն տեղում:

⁴ Tamcke M.: ebd., S. 134, Anm. 8.

⁵ Հոդվածում կարելի է մատնացույց անել գերմաներենի թարգմանության բազմաթիվ այլ վրիպումներ: Վեգների «Քաղաքների դեմքը» (ոչ՝ «Քաղաքների դիմագիծը») բանաստեղծական ժողովածուն լույս է տեսել ոչ թե 1917 թ. սկզբում, այլ գարնանը: Հոդվածի հեղինակը «տարվա սկիզբ» է թարգմանել գերմաներեն Frühjahr բառը, որը չի նշանակում տարվա սկիզբ կամ ձմեռ, այլ գարուն՝ ամենախիսկական իմաստով:

ռայության պատրվակով վայելքներից օգտվելու և պարապ թրևելու համար, ուստի և Վեգների այդ շրջանի գործունեությունն անվանում է «ամոթալի», իսկ նրա վերադարձը Թուրքիայից՝ «ամոթալի վտարում» (*schmachvolle Abschiebung*)⁶, որը նույնպես նշված հոդվածում բաց է թողնված՝ հավանորեն այն պատճառով, որ Հայաստանում բավականաչափ ծանոթ են Վեգների՝ մեծարանքի արժանի հայանվեր գործունեությանը, և չէր կարելի միանգամից այդչափ անամոթաբար վարկաբեկել հայ ժողովրդի մեծ բարեկամին:

Սարուխանյանի նյութն ընթերցելիս տպավորություն ես ստանում, որ գերմանացի պրոֆեսորը, Վեգների ականատես լինելը հերքելով հանդերձ, կասկածի տակ չի առնում Օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանությունը, որի հիշատակման պակաս չի զգացվում «Լրաբերի» հիշյալ հոդվածում: Իրականում, պրոֆեսորն իր հոդվածներում և հրատարակած մենագրության մեջ ամենուրեք ընդունում է միայն «արտաքսում», «տեղահանություն» բառերը և «ցեղասպանություն» իրավական տերմինը գործածում է միայն չակերտներում՝ իբրև հայերի հավակնություն⁷: «Լրաբերի» հեղինակի հրապարակումից այդ չի երևում:

Իր ատենախոսության մեջ պրոֆ. Տամկեն բավարարվում է միայն հայտարարելով, թե «Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան Թուրքիայում հարյուր-հազարավոր հայեր մահացել են տեղափոխման պատճառով»⁸, և փաստորեն արդարացնում է այդ վերաբնակների մի մասի ոչնչացումն այն պատճառաբանությամբ, թե «պատերազմի ժամանակ ռազմական գործողություններն առավել զերակա են, քան բարոյական խնդիրները»: Եվ դրանով էլ բացատրվում է, որ Գերմանիան պաշտոնապես ձեռնպահ վերաբերմունք է որդեգրել դաշնակից պետության (Թուրքիայի) ներքին միջոցառումներին⁹ նկատմամբ: Սա կոչվում է ավետարանական աստվածաբանություն՝ ըստ պրոֆ. Տամկեի, որն իրականում ոչ մի ընդհանուր բան չունի ավետարանական քարոզիչների մարդասիրական առաքելության հետ: Ինչպե՞ս կարող է մի անպաշտպան ժողովրդի համատարած սպանող ղիտվել որևէ պետության «ներքին միջոցառում» կամ «բարոյական խնդիր»:

Օսմանյան Թուրքիայում հայերի հետ տեղի ունեցած աղետը բնորոշելու համար պրոֆ. Տամկեն վկայակոչում է մի շարք քաղաքագետների ու ժամանակակից պատմաբանների տեսակետները: Նրա փաստարկների թվում է հայերիս շատ հայտնի, պատկառելի դիվանագետ և հայանպաստ գործիչ Յոհաննես Լեփսիուսի «Հայաստան և Եվրոպա»¹⁰ աշխատությունը, որով նա ցանկանում է ապա-

⁶ Tamcke M.: *ibd.*, S. 131.

⁷ Tamcke M.: *Einleitung*, S. 1.

⁸ Tamcke M.: *ibd.*, S. 12.

⁹ Tamcke M.: *ibd.*, S. 11.

¹⁰ Lepsius J.: *Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919 (Nachdruck Bremen, 1986).*

ցուցել, որ Լեփսիուսը խոսում է Թուրքիայում միայն հայերի տեղահանության մասին՝ դրա կողքին մոռանալով նույն Լեփսիուսի «Հայ ժողովրդի մահվան երթը» աշխատությունը (Պոտսդամ, 1919)¹¹: Ավելին, ներածության սկզբում պրոֆ. Տամկեն առանց որևէ առարկության բերում է թուրքամետ մտայնությամբ տոգորված Է. Ֆայզլի տեսակետը, որը Հայոց ցեղասպանությունն անվանում է առասպել, իբր հայերը այն հորինել են իրենց ծայրահեղականությունն ու ահաբեկչությունը արդարացնելու համար: Շատ խոսուն է Ֆայզլի 1986 թ. հրատարակած գերմաներեն այդ աշխատության վերնագիրը՝ «Ահաբեկչության առասպելը. հայկական ծայրահեղականությունը. դրա պատճառներն ու հետին նպատակները»¹²: Այնպես որ Տամկեի ամբողջ ձեռնարկը ոչ միայն հակավեզներյան միտում ունի, այլև Հայոց ցեղասպանության իրավական պահանջը հերքելու նրպատակ: Այլ կերպ էլ չէր կարող լինել:

Գալով Գերմանիայի պատասխանատվության հարցին՝ պրոֆ. Տամկեն նույնիսկ շեշտում է Լեփսիուսի չեզոք դիրքորոշումը այդ հարցում, թեև ինքն էլ անմիջապես նշում է, որ Լեփսիուսը երբեմն մեղադրում է Գերմանիային Թուրքիայի հետ համագործակցելու և համապարտ պատասխանատվության մեջ¹³:

Ո՞վ կամ ի՞նչն է ուղղորդում պրոֆ. Տամկեին՝ հերքելու Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի կոտորածներն ու ջարդերը Օսմանյան Թուրքիայում, և նրա զանգվածային բնաջնջումը բացատրելու միայն «տեղահանության հետևանքով»: Եվ ավստասանքի արժանի է, երբ հարգելի պրոֆեսորը վկայակոչում է նույնիսկ Պ. Մոզերի աշխատությունը, որտեղ թուրքերը պատմում են հայերի կազմակերպած՝ մուսուլմանների ջարդերի մասին: Ի վերջո, եթե հայերը զանգվածաբար կոտորել են թուրքերին, ապա որտե՞ղ են հիմա երեք միլիոնի հասնող հայերը, և ինչպե՞ս է, որ այդ հայերի փոխարեն նրանց բնիկ տարածքների վրա հաստատվել են ցեղասպան եղած թուրքերը:

Պրոֆ. Տամկեն ջանք չի խնայում ամենատարբեր միջոցներով ապացուցելու, որ Վեզները Միջագետքում ականատես չի եղել հայերի կրած տառապանքներին և ջարդերին, որոնց մասին ինքը գրել է 1915-1916 թթ. և հաջորդ շրջանում, որ այդ ամենը նրա նամակներում ու գրվածքներում առավելապես «գրական ծագում ունեն» այսինքն, նա օգտվել է այլոց վկայություններից՝ նպատակ ունենալով իր համար «կերտել» հայ ժողովրդի պաշտպանի հերոսական կերպար: «Միայն այլ ականատեսների հաղորդումների հետ համեմատելով՝ կարելի է եզրակացություն անել վեզներյան վկայության

¹¹ **Lepsius J.:** *Der Todesgang des armenischen Volkes, Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Potsdam 1919 (Reprint Heidelberg 1980 der Ausgabe Potsdam 1930).*

¹² **Feigl E.:** *Ein Mythos des Terrors. Armenischer Extremismus - seine Ursachen und Hintergründe, Freilassing/Salzburg, 1986.*

¹³ **Tamcke M.:** *ebd., S. 11, Anm.1.*

ճշմարտացի լինելու մասին»¹⁴, բայց այս հիասթափեցնող եզրակացությունը ի դերն է ելնում Վեգների հաղորդած յուրաքանչյուր վկայության հետ առաջին իսկ հանդիպումից: Ահա, օրինակ, մի հատված գերմանուհի բուժքույր Մարգա ֆոն Բոնինին 1915 թ. նոյեմբերի 26-ին Ռաս-Էլ-Այնից գրած նամակից, որի հետ սանիտար Վեգները ծանոթացել էր Կոստանդնուպոլսում՝ Գյուլիանե (Վարդաստան) կոչված ռազմական հիվանդանոցում. «Զգում եմ, որ վաղուց այսքան առույգ չեմ եղել, ինչպես այս օրերին՝ հակառակ շուրջս տիրող համատարած թշվառության: Որովհետև բոլոր ճամփաների եզրերը բռնված են հայ գաղթականների ողբալի ու սովալլուկ կերպարանքներով, որոնց հեծեծող, աղաղակող, մուրացող կենդանի ցանկապատի միջով, որից մեկնվում են հազարավոր աղերսող ձեռքեր, տառապագին տողանցում են մեր հոգիները: ... Հենց նոր, երբ գրում եմ այս տողերը, վերադարձա ճամբարում կատարած պրտույտից: Ամեն կողմից ինձ պաշարում էին աղաղակող քաղց, մահ, հիվանդություն, հուսահատություն: Տարածվում էին ապականություն ու գարշահոտ: Մի վրանից լսվում էր մահամերձ կնոջ թառանչը: Մի մայր, համազգեստիս մուգ մանիշակագույն թնձալներից կռահելով սանիտարական գորամասին պատկանելու, ձեռքերը կարկառած՝ իմ կողմը վազեց: Ինձ բժշկի տեղ դնելով՝ նա վերջին ճիգով կառչեց թշվառիս, որ ո՛չ վիրակապ ունեի, ո՛չ դեղորայք, և որին արգելված էր նրան օգնել:

Բայց այս ամենը նսեմանում էր այն զարհուրելի պատկերի առաջ, որ ներկայացնում էր որբ մանուկների օրավուր աճող բազմությունը: Վրանաքաղաքի ծայրին նրանց համար գետնի մեջ շարքով փոսեր էին փորված, որ ծածկված էին հնամաշ ձորձերով: Դրանց տակ ծվարում էին նրանք գլուխ-գլխի՝ ամեն հասակի տղա ու աղջիկ՝ անապաստան, վայրենացած, սովատանջ, պարենից ու հացից զուրկ, մարդկային ամենաչնչին օգնության կարոտ, և գիշերվա ցրրտից դողալով՝ իրար սեղմված, փայտացած մատներով մի-մի փոքրիկ ածխակոթ բռնած՝ ապարդյուն փորձում էին տաքանալ: Ոմանք անդադար լալիս էին: Դեղնած մազերը երկար չխուզելուց թափվել էին ճակատներին, կեղտն ու արցունքը՝ երեսներին թանձրացել: Մյուսները պառկած էին մահամերձ: Անհուն էին նրանց մանկական աչքերը և ցավից դուրս պրծած, ու թեև լռիկ նայում էին իրենց դիմաց, թվում էր, թե նրանց դեմքին դառնագույն նախատինք կար աշխարհի հանդեպ: Այո՛, կարծես ճակատագիրը երկրի բոլոր արհավիրքները հավաքել, կիտել էր այս անապատի եզրին, որ մի անգամ ևս ցույց տա, թե մեզ ինչ է սպասում: Մոսկունով համակված՝ ես սրտի բաբախյունով դուրս շտապեցի ճամբարից, և չնայած քայլում էի հարթ գետնի վրայով, գլուխս սկսեց պտույտ գալ, կարծես երկու կողմից գետինը պատռվել ու ոտքիս տակ անդունդ էր բացվել»¹⁵:

¹⁴ Tamcke M.: *ebd.*, S. 71.

¹⁵ Armin T. Wegner, *Der Weg ohne Haimkeher. Ein Martyrium in Briefen. Verlag vor Egon Fleischel, Berlin, 1919, S. 16-23. Թարգմանությունը՝ Ա. Մուշեղյանի (Արմին Թեոֆիլ Վեգներ, Ճանապարհ առանց սունդարձի: Նահատակություն նամակներում, Ե., 2000, էջ 39-42):*

Տասնմեկ ամիս անց, երբ Վեզները Գերմանիա վերադառնալիս անցնում էր այս վայրերով, տեղահանված ամբողջ հայ ժողովրդից մնացել էին միայն ոսկորներ: Ո՞ւր է այստեղ ականատեսի հերոսականությունը, որի մասին ակնարկում է պրոֆ. Տամկեն՝ մեր առջև միայն գերմանացի օրինապահ, վախվորած սանիտար զինվորն է, որին արգելված էր խեղճերին օգնություն ցույց տալ, և մի պարզ մարդկային հոգի, որը տեսած սարսափների հուսահատությունից հողը կորցնում է ոտքերի տակ: Ցավոք, ամսագրի սուղ էջերը թույլ չեն տալիս մի առ մի ցույց տալ պրոֆ. Տամկեի փաստարկների սնանկությունը:

Մյուս կողմից, արդեն Գերմանիայում եղած ժամանակ, երբ Վեզները 1917 թ. կեսերին պատմվածքներ է գրում Օսմանյան Թուրքիայում հայերի կոտորածի ու կրած տառապանքների մասին («Հարձակում կանանց բաղնիքի վրա» և «Բանկիիրը»), կամ, երբ նա 1919 թ. մարտի 19-ին Բեռլինի «Ուրանիա» սրահում դասախոսություն է կարդում՝ «Հայ ժողովրդի արտաքսումը անապատ»՝ ցուցադրելով իր կատարած լուսանկարների սլայդները, ապա Տամկեն եզրակացնում է՝ իբր նա դա անում է Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչության քարոզչության բաժնի պատվերով՝ Գերմանիայի մեղսակցությունը Թուրքիայի իրագործած հայաջինջ «միջոցառումներին» նվազեցնելու քաղաքական նկատառումներով: Գուցե անդրրդվելի պրոֆեսորը հենց նույն քաղաքական նկատառումներով է մեզ՝ հայերիս գրգռում Վեզների հիշատակի դեմ: Ի՞նչ իմանաս մարդու մտքինը: Իսկ հայտնի՞ է պրոֆ. Տամկեին, որ Վեզների այդ դասախոսությանը ներկա էին նաև Գերմանիայում ուսանած և պատերազմի պատճառով այնտեղ պատանդ մնացած Կարո Մելիք-Օհանջանյանը (հետագայում՝ ակադեմիկոս), Հակոբ Զորյանը (1937 թ. գնդակահարված), և ուրիշ նշանավոր հայ գործիչներ, որոնց աչքի առաջ գերմանացի խոշոր հայագետ Յոզեֆ Մարկվարտը ստիպված էր ապտակել թուրք դեսպանին՝ դասախոսությունը խանգարելու համար:

Վեզները ոչ միայն չի արդարացնում Գերմանիայի մեղսակցությունը երիտթուրքերի գործած ոճիրներին, այլ աշխարհին է ներկայացնում Միջագետքի անապատում կործանման հասած հայերի՝ ցասումով լի մեղադրանքը Գերմանիայի մեղսակցության մասին՝ որ թուրքերի եղեռնագործությունը Գերմանիայի թողտվությամբ եղավ. «Մեսքենե, 15 հոկտեմբերի: Երբ իրիկնանում է, քահանա տեր Տաճատ Արսլանյանի հետ նստում եմ նրա վրանի բաց դռանը, և նրանք ինձ պատմում են իրենց կրած տառապանքների, քաղաքի 800 ընտանիքների մասին, որոնց հետ ճանապարհ ընկան. այն բազմահազար մարդկանց մասին, որ նա թաղել էր անապատում, դրանց թվում՝ քսաներեք քահանա և մի եպիսկոպոս: Նրանց հայացքները ճչում էին վրաս. «Դու ինքդ գերմանացի ես,- ասում էին,- և թուրքերին դաշնակից... ուրեմն ճիշտ է, որ դուք էլ էիք այդ ուզում»:

Ես խոնարհում եմ աչքերս: Ի՞նչ կարող եմ պատասխանել՝ նրանց կասկածը փարատելու համար»¹⁶:

Պրոֆ. Տամկեն առանձնահատուկ ջանք է գործադրում ապացուցելու, թե Արմին Վեգներին վերագրվող շուրջ 100 լուսանկարներից բոլորը չէ, որ անձամբ նրա ձեռքով են լուսանկարված: Ինքը՝ Արմին Վեգները, 1968 թ. ապրիլին իր արխիվում եղած՝ եղեռնի բոլոր լուսանկարները հանձնելով Միլանի Casa Armena (Հայոց Տուն) կազմակերպությանը՝ անձամբ հայտնել էր, որ այդ հավաքածուն տարիների իր երկարամյա փնտրտուքի արդյունքն է, որ դրա միայն մի մասն է լուսանկարված իր ձեռքով, իսկ ապակետիպ լուսանկարների մեծ մասը փչացել էր Միջագետքի կիզիչ արևից և խիստ անբարենպաստ պայմանների պատճառով: Թող որ հարյուրների փոխարեն դրանց թիվը տասնյակներ լինի, ի՞նչ է փոխվում դրանից՝ հավատացողը դարձյալ կհավատա, ուրացողը դարձյալ կուրանա: Եթե նույնիսկ մեկ լուսանկար մնացած չլիներ, մի թե դրանով ժխտվում է հայրենագրկված, գլխատված, մորթված, տանջամահ արված, սովից ու ծարավից մահակուլ եղած մեկուկես միլիոն, Վեգների հաշվով՝ երկու միլիոն հայերի ցեղասպանությունը:

Թե ինչ մեծ արձագանք ունեցավ Գերմանիայում Արմին Վեգների այս ամբողջ հայապաշտպան գործունեությունը, այդ մասին պետք է դատել ոչ թե այսօրվա կասկածելի քաղաքական նկրտումներով նրան վարկաբեկող հեղինակների խոսքով, այլ այն բարձր գնահատականով, որով անվանի գրող Ստեֆան Յվայգը 1921 թ. վերջին Վեգներին ներկայացնում է գերմանացի ընթերցող հասարակայնությանը, որ միաժամանակ արտահայտում է նաև Յվայգի վերաբերմունքը Հայոց ցեղասպանության նկատմամբ. «Թե երիտասարդ բանաստեղծ անհատը պատերազմից առաջ, պատերազմի ժամանակ և պատերազմից հետո ինչպես է ընկալել իր պատկերած աշխարհը, դրա համար, իմ կարծիքով, հազիվ թե գտնվի արվեստագետի մի այլ ցայտուն օրինակ, քան Արմին Թ. Վեգների երիտասարդ, առնական կերպարն է: Բնավորության պարզությունն ու ժամանակի գորեղ զգացումը վերին աստիճանի բնորոշ են դարձրել նրա գրական կեցվածքը ողջ էպոխայի համար...: Նրա առաջին խոսքը պատերազմից հետո այլևս խանդավառությունը չէ, այլ՝ բողոքը, հայոց եղեռնի այն ցնցող նկարագրությունը, որ առաջինը նրա խոսքի միջոցով հայտնի դարձավ անտեղյակ Գերմանիային, և որը երբեք կրքի այդպիսի ուժով և առնական սրբազան ցատումով չի պատկերվել: Թուրքիայից գրած նրա «Երանության հարկի տակ» և «Ճանապարհ առանց տունդարձի» նշմարներում առաջին անգամ է, որ արևելքի աշխարհը չի ներկայացվում այլևս Պիեռ Լոտիի վարդագույն ակվարելներով: Այստեղ, վերջապես, ոչ թե սոսկ արվեստին ու էկզոտիկային աչքը պլշած աշխարհաշրջիկն է, այլ՝ երկիրն ու ժողովուրդը իրենց ամենաձանր ժամին տեսած սոսկահար մարդը»¹⁷:

¹⁶ Meskene, den 15. Oktober [1916], S. 164-167 (նույն տեղում, էջ 67-68).

¹⁷ **Zweig St.:** Der Weg Armin T. Wegners – Berliner Tageblatt vom 15. Dezember. 1921.

Իհարկե, պրոֆեսոր Տամկեն լուրջան է մատնում հանրահայտ հոգեբան-գրողի և ժամանակակիցի բարձր դրվատանքը Արմին Վեգների սխրանքի մասին, բայց դա խոսուն լուրջուն է, որ մեզ՝ հայերիս, լուրջ մտածելու տեղիք է տալիս: Արդյո՞ք Հայոց ցեղասպանությունը ժխտելուց հետո հիմա էլ հերթը չի հասել Հայոց ցեղասպանության ամենականավոր ականատեսին ժխտելուն:

АРМИН Т. ВЕГНЕР НЕ НУЖДАЕТСЯ В ЗАЩИТЕ

МУШЕГЯН А. В.

Резюме

В 1980-1990-х годах теологом Мартином Тамке в Геттингене, Марбурге и Гамбурге были опубликованы ряд статей и монография, направленные против Армина Т. Вегнера – очевидца Геноцида армян. На основе новых материалов из вегнеровского литературного наследия и официальных документов проф. Тамке в своей докторской диссертации, посвященной Армину Т. Вегнеру и изданной отдельной книгой в Гамбурге в 1993 и 1996 гг. (“Armin T. Wegner und Armenier. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen”), задался целью доказать, будто Армин Вегнер, служивший в 1915-1916 гг. при немецком военном штабе в Месопотамии в качестве солдата-санитара, в действительности не был очевидцем геноцида или истребления армян. Сам проф. Тамке придерживается точки зрения, что во время Первой мировой войны в силу военной необходимости сотни тысяч армян, депортированных из Малой Азии в сирийские пустыни, погибли из-за неблагоприятных условий. Свидетельства современников и опубликованные самим же проф. Тамке новые архивные материалы дают возможность опровергнуть его беспочвенные утверждения. Отрицание Геноцида армян протурецкими кругами развязывает руки некоторым западным “исследователям”, считающим необходимым дискредитировать очевидцев Геноцида армян и, в частности, немецкого писателя и публициста Армина Вегнера.

WENN AUCH ARMIN WEGNER KEINE WERTeidIGUNG BRAUCHT

MUSCHEGHIAN A. W.

Resuimee

In achtziger und neunziger Jahren vorigen Jahrhunderts ist Evangelischer Theologie Dr. Martin Tamcke mit einigen Artikeln und besonders mit einer Ha-

bilitationsschrift “Armin T. Wegner und Armenier. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen” aufgetreten. Letztere wurde als Monographie 1993 und mit Ergänzungen 1996 herausgegeben in Hamburg. Gegenwärtig ist Dr. Martin Tamcke als Dekan an der Georg-August-Universität zu Göttingen tätig. Auf Grund neuer Dokumente aus dem Nachlaß von Wegner bezweckt der geehrte Professor der Evangelischen Theologie die Augenzeugenschaft Wegners als des unmittelbaren Zeugen der Vertreibung des armenischen Volkes in die Mesopotamischen Wüsten und seinen Massenmord 1915/16 zu verleugnen. In diesen Jahren diente Wegner Doktor der Jurisprudenz und Verfasser einiger Gedichtssammlungen, als einfacher Sanitätssoldat und Unterleutnant beim deutschen Militärstäbe des 6. Türkischen Armee unter dem Feldmarschall von der Goltz in Bagdad. Sodas sein Wort als des Augenzeugen war und ist damals und jetzt außerordentlich schwerwiegend für die Bestätigung des armenischen Genozids in der Osmanischen Türkei.

Dr. Tamcke legt großen Wert auf den Unterschied zwischen den Kriegstagebuchnotizen und den veröffentlichten Tagebuchtexten, um die Augenzeugenschaft Wegners für die Armeniergreuel und Massenmord abzulehnen. Doch seine Vergleiche und Behauptungen solcher Art sind größtenteils überzeugend. Die Hauptidee der Habilitationsschrift und der Monographie ist das Ziel des Autors, nach der Verleugnung des armenischen Genozids auch den großen Kämpfer gegen Tyranie und Völkermord zu verleumden, dessen Augenzeugenschaft als die des Doktors der Jurisprudenz und des Publizisten besonders überzeugend und darum gefährlich ist. Für seine heftigen Protest im Briefe vom 11 April 1933 an den Reichskanzler Adolf Hitler gegen die Massenverfolgungen der Juden in Deutschland wurde Armin Wegner in die Folterkammer geworfen und zur Emigration bezwungen.

Alle Beweise in dieser Untersuchung gegen die Augenzeugenschaft Wegners sind grundlos und bestehen keine Kritik. Konträre Bezeugnisse sind zahlreich. Allein die Briefe an die Krankenschwester Marga von Bonin vom 11. Oktober und 8. Januar 1917 genügen zu beweisen, daß der junge, Armin [Wegner](#), Doktor der Jurisprudenz und zugleich Sanitätssoldat die Vertilgung und Vernichtung des vertriebenen armenischen Volkes mit eigenen Augen gesehen und erlitten hatte.

Wir konstatieren endlich mit großer Befriedigung, daß geehrter Professor Martin Tamcke das Hauptziel seiner Untersuchung nicht erreicht hat.